ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

11.06.2026թ. N 704/2026

«ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՎԼԱԴԻՄԻՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ
(ՀՀ, ք. Երևան, Չարենցի 4
Հեռ.՝ +37433008787
էլ. փոստ՝ gevorgianconcern@gmail.com)

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(Պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին)

Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի (այսուհետ՝ Գնորդ) և «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև կնքված ԱՀԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/6-1 ծածկագրով՝ Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի կարիքների համար լոգոյով բրենդավորված իրերի ձեռքբերման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի մարքեթինգային հաղորդակցությունների և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից Պայմանագրով Գնորդին վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ վաճառողի կողմից չեն պահպանվել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով սահմանված մատակարարման ժամանակացույցով նախատեսված ժամկետները և չեն մատակարարվել N 1 հավելվածով սահմանված ապրանքները՝ 4-րդ չափաբաժնի մասով (թերմո բաժակներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ

կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.5 Գնորդն իրավունք ունի վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.7 Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

10 հունիսի 2026 թվականի թիվ Գ/001-26.06 մտից գրության համաձայն Վաճառողը հրաժարվում է մատակարարել ապրանքները՝ 4-րդ չափաբաժնի մասով: Պայմանագրի ժամկետը վերոնշյալ չափաբաժնի մասով ավարտվել է 22.05.2026թ.-ին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի /մասնակի/ հրաժարվում է «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագրից, համարելով այն լուծված՝ 372000 (երեք հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացվում է, որ Ընկերության Պայմանագրի և որակավորման ապահովման գումարների Գնորդի 900018010380 հաշվեհամարին սահմանված ժամկետներում վճարելու դեպքում Ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին Գնորդի ղեկավարի պատճառաբանված որոշումը չի ներկայացվի լիազոր մարմնին:

Պայմանագրի և որակավորման ապահովումները կանխիկ ձևով վճարված լինելու դեպքում՝ անհրաժեշտ է Գնորդին ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն Ընկերության կողմից ուղղված դիմումի պատճենը՝ ապահովման գումարները Գնորդի՝ նշված հաշվեհամարին փոխանցելու մասին: Նված գումարների վճարումը պետք է իրականացվի լիազոր մարմնին որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը:

Եթե մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու

վերջնաժամկետը լրանալու օրը, ապա Գնորդն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՍԱՄՎԵԼ ԽԱՐԱԶՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
UNIVERSAL HEALTH INSURANCE FUND
00542809
ՀԻՄՆԱԴՐԱՄ
FUND

Կատարող՝ Սոնա Պապյան
Գնումների թիմի ավագ մասնագետ
Հեռ.՝ 044220035
Էլ. փոստ՝ sona.papyan@uhif.am